ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 10 >> Հունվարի 2017թ. N 01 - Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանի պահանջները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2017 թվականի ներքին աուդիտի հաստատված տարեկան ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի թվով 6՝ <<Արմավիրի թիվ 9 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ (օժանդակ) դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Արազափի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում և <<Արտաշարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում անցկացնել 2014, 2015, 2016 թվականների բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանի, գլխավոր մասնագետներ Վիգեն Խաչատրյանի, Սրապիոն Մարտիրոսյանի և Հայկ Պողոսյանի կողմից:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել ֆինանսական աուդիտ անցկացվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին (համաձայնությամբ):

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 27 աշխատանքային օրյա ժամկետում:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ